ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

N 97 29.09.2014թ.

☎ (0-255) 6-00-58
ֆաքս 055 6-00-58

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.
Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ավագանու թիվ 15 որոշումը և համայնքի ղեկավարի թիվ 41,42 որոշումները:

Առդիր 3 թերթ:

Սարամեջ համայնքի ղեկավար՝ Հ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 Սեպտեմբերի 2014 թվականի N 15-Ն

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ , կետով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63,64 և 65-րդ հոդվածներով սահմանված կարգով , հաշվի առնելով Սարամեջ համայնքի ղեկավարի առաջարկությունը,համայնքի ավագանին .

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող կիսաավարտ շենք շինությունները,նրանց զբաղեցրած հողատարածքների հետ միասին նվիրատվությամբ հանձնել կարիքավոր ընտանիքներին:

1. Համայնքի ղեկավարի հետ կնքել նվիրատվության պայմանագիր , որը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման:
2. Կատարել փոփոխություններ գույքամատյանում և հողային հաշվեկշռում :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ		ԿՈՂՄ(4)	ԴԵՄ (0)	ՉԵՌՆՊԱՀ(0)
Վահրամ	Եղիազարյան			
Աղվան	Մկրտչյան			
Շալիկո	Խաչատրյան			
Մանվել	Թադևոսյան			

Սարամեջ համայնքի ղեկավար՝ Հ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 Սեպտեմբերի 2014թ. Թիվ 41-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 37,38 հոդվածներով, ՀՀ կառավարության 10.06.1999թ.-ի թիվ 432 19.02.2004թ.-ի թիվ 157-Ա որոշումների , ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով համայնքի ավագանու 3.09.2014թ. թիվ 15-Ն որոշմամբ տրված համաձայնությունով և հաշվի առնելով այն հանգամանքը , որ Արտյոմ Գրիգորյանը ապրում է ժամանակավոր կացարանում, կարիքավոր է, երկրաշարժի հետևանքով կորցրել է իր բնակելի տունը,ինչպես նաև դիմել և խնդրել է իրեն հատկացնել համայնքին պատկանող անավարտ բնակելի տներից մեկը, տնամերձ հողամասով հետագայում իր ուժերով այն ավարտին հասցնելու և բնակություն հաստատելու,ուստի ելնելով վերագրյալից

ՈՐՈՇԵՑԻ .

1.Սարամեջ համայնքի 0019-0003 ծածկագրի 16 փողոց թիվ 19 հասցեում գտնվող 82քմ բնակելի տունը և նրան կից 0.137 հա տնամերձ հողամասը 27.03.2006թ. սեձականության իրավունքով թիվ 2094025 վկայական՝ նվիրել Արտյոմ Գրիգորյանին ,որպես երկրաշարժի հետևանքով կորցրած բնակելի տանը փոխհատուցում, իր ուժերով երկու տարվա ընթացքում ավարտին հասցնելու և բնակվելու նպատակով :

2.Ա.Գրիգորյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր ,որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման :

3. Նշված կիսակառույց բնակելի տունը հանել համայնքի հաշվեկշռից և փոփոխություն կատարել գույքահարկի և հողի հարկի բազաներում :

4.Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանմանը՝ որպես հիմք վերը նշված անշարժ գույքերի նկատմամբ Ա.Գրիգորյանի սեփականության իրավունքին պետական գրանցում տալու համար :

5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Սարամեջ համայնքի ղեկավար՝ Հ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Սեպտեմբերի 2014թ. Թիվ 42-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ,,ՏԻՄ,, օրենքի 43 հոդվածի որոշում եմ.

Համայնքի բնակիչներ՝ Անահիտ Կարապետյանին, Անի Թադևոսյանին,Սուսաննա Լամբարյանին, Ցողիկ Գասոյանին,Քրիստինե Ավագյանին, Ալինա Նազարյանին, Մարիամ Հակոբյանին, Անահիտ Գրիգորյանին իրենց դիմումների համաձայն 2014թ.-ի բյուջեի 4729 հոդվածի 10.4.1 դասակարգման ընտանիքի անդամներ և զավակներ՝ 200000 (երկու հարյուր) հազար դրամ տալ դրամական օգնություն:

1.Անահիտ Կարապետյան -25000 հազար
2.Անի Թադևոսյան -25000 հազար
3.Սուսաննա Լամբարյան -25000 հազար
4.Ցողիկ Գասոյան -25000 հազար
5.Քրիստինե Ավագյան -25000 հազար
6.Ալինա Նազարյան -25000 հազար
7. Մարիամ Հակոբյան -25000 հազար
8.Անահիտ Գրիգորյան -25000 հազար

Սարամեջ համայնքի ղեկավար՝ Հ.Հովհաննիսյան